# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի փետրվարի 1-ին կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1-1 պայմանագրում 2024 թվականի մարտի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն

Վճարման ժամանակացույցի հաստատում:

Փոփոխության հիմնավորում

ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1-1 ծածկագրերով գնման պայմանագրերի 8.5-րդ կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է համաձայնագիր վճարման ժամանակացույցը հաստատելու համար:

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

*Համաձայնագիր-1*

**01.02.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «20» մարտի 2024թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Գռոսս Գրուպ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Լ. Ասատրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.02.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1. Պայմանագրի 8.15 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը և կից հավելվածը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական եկամուտների կոմիտե | «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| ք.Երևան, Մ. Խորենացի 3,7 | ք.Երևան Մարգարյան 45/120 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 01338219 |
| Հ/Հ 900011013902 | Հ/Հ 11811028446001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի | «Այդի Բանկ» ՓԲԸ |
| գործառնական վարչություն | Տնօրեն |
| Գլխավոր քարտուղար | |
| **Է. Գևորգյան** _____ | **Լ. Ասատրյան**_____ |
| /ստորագրություն/ Կ.Տ/ | /ստորագրություն/ Կ.Տ/ |

Հավելված
Հաստատված է 01.02.2024թ. կնքված N ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-24/1-1
գնման պայմանագրի «20» մարտի 2024թ. փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը | Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| ***զգեստապահարաններ*** | 5122 | | | | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 | 561 330 |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011013902
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**Է. Գևորգյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք.Երևան Մարգարյան 45/120
ՀՎՀՀ 01338219
Հ/Հ 11811028446001
«Այդի Բանկ» ՓԲԸ
Տնօրեն

**Լ. Ասատրյան** _____
/ստորագրություն/ Կ.Տ/